ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԶԱՎԹԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱՍ I

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊաՀԱԿ

Մարդկային և նյութական կորուստներով հագեցած պատերազմի սպառնալիքի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում լուծել զավթած տարածքներում զինված պայքարը շարունակելու հիմնախնդիրը:

Կարելի է ենթադրել, որ հնարավոր են իրավիճակներ, երբ ստիպված լինենք հակառակորդին զիջել երկրի տարածքի մի մասը: Բանակը կարող է պարտություն կրել, սակայն անհրաժեշտ է, որպեսզի նրա զգալի մասը կարողանա երկար և համառ դիմադրություն ցույց տալ հակառակորդին:

Ենթադրենք, որ հակառակորդը զավթել է քաղաքը: Ի՞նչ պետք է անի այս իրավիճակում աշխատողը, ձեռներեցը, քաղծառայողը, տնային տնտեսուհին և հատկապես բանակի անձնակազմը: Հավանաբար, տեսնելով դիմադրության ցանկացած անհույսություն՝ նա ցած կշպրտի զենքը և խոնարհաբար կսպասի իր ապագա ճակատագրի որոշմանը կամ էլ ծառայության կանցնի թշնամուն: Շատ հարցեր են ծագում, բայց որտեղի՞ց կարող ենք գտնել պատասխանները: Ակնհայտ է մի բան՝ թշնամին անողոք է, նա առանց վարանելու կոչնչացնի (եթե դա համապատասխանում է իր շահերին) տասնյակ, հարյուրավոր, հազարավոր մարդկանց: Բնակչությանը նվազագույնը սպասվում է տեղահանություն: Պատմության դառը փորձը սովորեցնում է, որ հակառակորդը ցանկացած պահի կարող է սկսել պարտվածների զանգվածային ոչնչացումը:

Ի՞նչ անել, եթե հակառակորդն այնուամենայնիվ զավթել է տարածքը: Պաշտպանվեք մինչև վերջ: Ողջ բնակչությունը պետք է դիմադրի: Հակառակորդը գրավյալ տարածքում չպետք է իրեն հանգիստ զգա: Անհրաժեշտ է վնասել նրան, որտեղ հնարավոր է:

Սույն ուղեցույցի նպատակն է նախապատրաստել բնակչությանը զինված պայքարի: Պատերազմի ժամանակ զինված դիմադրությունը հիմնականում կապահովվի բանակը, բայց մեր պարտականությունն է անել ամեն ինչ, որպեսզի բանակը պահպանի իր մարտունակությունը: Սա պետք է լավ հասկանա երկրի ողջ բնակչությունը:

Միևնույն ժամանակ այս ուղեցույցը զինված դիմադրություն կազմակերպելու վերաբերյալ տալիս է միայն ընդհանուր դրույթներ: Հաջող գործողությունների համար, բացի այդ, պետք է լավ իմանանք մարտավարությունն ու ռազմական տեխնիկան: Սխալ պատկերացումներն ու անբավարար նախապատրաստությունը կհանգեցնեն միայն ավելորդ կորուստների:

ԳԼՈՒԽ I
ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Զինված դիմադրությունը համալիր պաշտպանության շրջանակներում

Մարտունակ բանակը համընդհանուր պաշտպանության կազմակերպման ամենակարևոր գրավականն է: Դրա հետ մեկտեղ չի կարելի անտեսել նաև աշխարազորայինների, ջոկատների զինված դիմադրության կազմակերպման նախապատրաստումը:

Պետք է ակնկալել, որ գերազանցող հակառակորդի հարվածների ներքո երկրի տարածքի մի մասը ազգային զինված ուժերի կողմից կարող է ժամանակավորապես թողնվել: Սակայն բանակը չի կարող անվերջ հետ քաշվել, նա ստիպված է լինելու ռազմական գործողություններ իրականացնել իր երկրի տարածքում: Ուստի անհրաժեշտ է առաջնորդվել զինված դիմադրության ցուցաբերմամբ:

Այս կրիտիկական իրավիճակում «համընդհանուր դիմադրությունը» գերադասելի է կապիտուլյացիայից: Նույնիսկ բանակի ջախջախման դեպքում, ստրկացումից խուսափելու համար չպետք է դադարեցնենք զինված պայքարը: Հնացած է այն գաղափարը, որ պատերազմը միայն բանակի գործն է, իսկ զինված պայքարն ավարտվում է հաղթանակի կամ պարտության դեպքում: Ժամանակակից պայմաններում, մինչև զինված պայքարի լիակատար հաղթանակը, միայն կանոնավոր բանակն այլևս բավարար չէ: Զինված դիմադրության մասշտաբները հակառակորդին ստիպելու է ուժեր և միջոցներ թողնել երկրի ամբողջ տարածքում, որպեսզի վերահսկի իրավիճակը գրավված շրջաններում, բացի այդ զինված դիմադրության ընթացքում հակառակորդին կարող է հասցվել ավելի զգալի վնաս, քան կանոնավոր բանակը ագրեսիան հետ մղելիս:

Փորձից հայտնի է, որ զինված դիմադրություն ցուցաբերողների դեմ հաջող պայքարի համար հակառակորդին անհրաժեշտ է անձնակազմի բազմակի գերազանցություն: Այս առավելությունը չի կարելի փոխհատուցել ամենաժամանակակից ռազմական տեխնիկայով (տանկերով, ինքնաթիռներով), քանի որ զինված պայքարում որոշիչ դերը պատկանում է մարդուն:

Եթե մենք կարողանանք ձևավորել աշխարազորային ջոկատներ, որոնց ընդհանուր թիվը կկազմի մոտ 30 հազար մարդ, կամ եթե պահպանվի կանոնավոր բանակի թվաքանակի մոտ 10%-ը, հակառակորդը զինված դիմադրությունը զսպելու համար ստիպված կլինի երկար ժամանակ երկրում ունենալ մոտ 100-150 հազարնոց խմբավորում:

2. Զինված դիմադրությամբ պատերազմ վարելու նպատակահարմարությունը

Զինված դիմադրության ցուցաբերման հակառակորդները բերում են երեք հիմնական փաստարկ.

1. Աշխարհազորայիններով, ջոկատներով պատերազմի վարման ընթացքում վտանգվում է պետության այսպես կոչված «ներքին կարգը» :
2. Աշխարհազորայինների, ջոկատների զինված պայքարը հանգեցնելու է թշնամու կողմից բռնաճնշումներին և երկրի բնակչության շրջանում մեծ կորուստներին:
3. Ջոկատներով պատերազմ վարելը խախտելու է պատերազմներ վարելու օրենքներն ու կանոնները:

Առաջին փաստարկը կարելի է վիճարկել հետևյալ կերպ.

Հակառակորդի կողմից օկուպացիայի դեպքում կդադարի գոյություն ունենալ տվյալ երկրի սոցիալ-քաղաքական կառուցվածքը: Ժամանակակից պատերազմները «աշխարհընկալման պատերազմներ» են, որոնցում լուծվում են կյանքի կամ մահվան հարցերը և ժամանակակից պայմաններում կարևոր է ոչ այնքան հաղթանակի հասնելը, որքան հակառակորդի վրա հոգեբանական և գաղափարական ազդեցության հաստատումը:

Բոլոր նրանք, ովքեր կհամագործակցեն հակառակորդի հետ, կկորցնեն իրենց երկրի քաղաքացի կոչվելու իրավունքը, իսկ նա, ով ակտիվ մասնակցություն կունենա դիմադրության շարժմանը, հետպատերազմյան շրջանում, անկասկած, ձեռք կբերի համընդհանուր ճանաչում և բարձր հեղինակություն:

Երկրորդ փաստարկին նույնպես կարելի է առարկել:

Ամեն դեպքում, երկրի օկուպացիան առնչված է թե՛ մարդկային և թե՛նյութական ռեսուրսների մեծ կորուստների հետ: Նույնիսկ զինված պայքար վարելուց լիովին հրաժարվելը շատ բան չի կարող փոխել:

Բացի այդ, բնակչությունը, ի վերջո, կսկսի զինված պայքարը բռնազավթող ուժերի և դաժան հարկադրանքի դեմ: Առջևում աշխարհայացքի և քաղաքական համոզմունքների համար շատ դժվար զինված պայքար է սպասվում և կանխատեսել զանգվածային զինված դիմադրության սկիզբը բավականին դժվար է:

Երրորդ փաստարկը կարելի է վիճարկել հետևյալ կերպ.

Հակառակորդի կողմից ռազմական գործողությունների վճռական վարումը կհանգեցնի պատերազմի ընդհանուր ընդունված կանոնների խախտմանը: Կարող ենք միայն խորապես ափսոսալ դրա համար, բայց անկարող ենք որևէ բան փոխել[1]:

Շատ «փորձագետների» կարծիքով, զինված պայքարը և դիմադրության շարժումը չեն կարող արդյունավետ լինել ռազմական տեխնոլոգիաների զարգացման դարում: Պետք չէ մոլորվել: Նոր պատերազմը կընդունի ինչպես գաղափարախոսությունների, այնպես էլ տեխնիկայի պայքարի բնույթը:

---

[1] Օրինակներ Երկրորդ համաշխարհային պատերազմից.

- Նացիստական Գերմանիայում համակենտրոնացման ճամբարների ցանցը: Փորձելով բնաջնջել ամբողջ ռասսան, ինչպիսիք են հրեաները: Պատժիչ ջոկատների գործունեությունը Խորհրդային Միության օկուպացված տարածքներում: Ֆաշիզմի պատճառով սովից, ծանր աշխատանքներից և այլ կտտանքներից ոչնչացան 6 միլիոն հրեաներ, 7 միլիոն ռուսներ, 4,2 միլիոն լեհեր, 130 հազար գերմանացիներ;
- արտաքսում հարկադիր աշխատանքի համար (2 միլիոն ռուսներ արտաքսվել են Գերմանիա, նրանց կեսը կանայք էին);
- անմարդկային վերաբերմունք ռազմագերիների նկատմամբ (5,7 մլն ռուս ռազմագերիներից 2,6 մլն մարդ զոհվել է գերության մեջ):

3.Զինված պայքարի նպատակները

Օպերատիվ նպատակը

Աշխարհազորայինների, ջոկատների զինված պայքարի հիմնական օպերատիվ նպատակը հակառակորդի գրաված տարածքներում դիմադրությունը շարունակելն է:

Թույլ կամ պարտվող պետությունների համար զինված դիմակայությունն առանձին դեպքում կարող է ավելի կարևոր լինել, քան նրա կանոնավոր բանակի զինված պայքարը:

Հակառակորդի համար օկուպացված ամբողջ տարածքը պետք է վտանգ ներկայացնի:

Աշխարհազորայինների (ջոկատների) ստորաբաժանումները պետք է վախ և անորոշություն առաջացնեն հակառակորդի մոտ (դա նրան կստիպի, իր անվտանգությունն ապահովելու համար, կազմակերպչական առումով բարդ միջոցառումներ իրականացնել), ինչպես նաև վնաս հասցնեն նրա կենդանի ուժին և տեխնիկային:

Զինված պայքարի հիմնական խնդիրը ընդհանուր իրավիճակի բարենպաստ զարգացմամբ թշնամուն վտարելու և տարածքը ազատելու համար երկրի բնակչության կազմակերպված զինված դիմադրությունն է:

Մարտավարական նպատակը (գծանկար 1) հաղորդակցության ուղիների (երկաթուղիներ և մայրուղիներ), կապի գծերի և հանգույցների (հեռախոս, ռադիո, հեռուստատեսություն), էլեկտրահաղորդման գծերի, արդյունաբերական ձեռնարկությունների, պահեստների (բազաների), շտաբների, վարչական ու պետական գործակալությունների վրա կազմակերպված հարձակումն է :



Գծանկար 1. Հարձակման ենթակա օբյեկտներ

4.Աշխարհազրային ստորաբաժանումների և ջոկաների ստեղծումը

Հակառակորդին զինված դիմադրություն ցույց տալու համար անհրաժեշտ է ջախջախված կամ մարտունակությունը կորցրած զորամասերից (ստորաբաժանումներից) ամուր կորիզ ստեղծել, որին պետք է օգնություն ցուցաբերի քաղաքացիական բնակչության կազմից ձևավորված ջոկատները:

Վաշտերի, գումարտակների կամ գնդերի շտաբները պետք է միավորեն և ղեկավարեն կանոնավոր բանակի և բնակչության ցրված խմբերը: Այնտեղ, որտեղ շտաբներ չկան, նախաձեռնող սպաները ստանձնում են զինված ջոկատների կազմակերպումն ու ղեկավարումը:

Բարձրագույն ղեկավարությունը պետք է կապ հաստատի ջոկատների հետ և կազմակերպի պայքարը:



Գծանկար 2. Կանոնավոր բանակի ստորաբաժանումներից զինված ջոկատների ստեղծումը

5. Զինված ջոկատների և դիմադրության շարժման միջև պարտականությունների բաշխումը

Զինված պայքար մղելու համար կարող են ստեղծվել.

- շարժական (մոբիլ) ջոկատներ, որոնք ներառված կլինեն կանոնավոր բանակի կազմում կամ կձևավորվեն մարտունակ մնացած ստորաբաժանումներից;
- դիմադրության շարժման տեղական ջոկատներ (գծապատկեր 3):

Խնդիրն այն է, որ հակառակորդի գրավյալ տարածքներում դիմադրության շարժման և շարժական ջոկատների համագործակցությամբ ստեղծել այսպես կոչված ազատագրված տարածքներ:



Գծանկար 3. Զինված ջոկատների և դիմադրության շարժման խնդիրները

1. *Ազատագրված շրջան:* Զինված ջոկատների կողմից վերահսկվող շրջան (հակառակորդն այն կարող է գրավել միայն մարտունակ ուժերով՝ մինչև գումարտակ, գունդ: Ավելի թույլ ուժերը կոչնչացվեն զինված ջոկատների կողմից):
2. *Հակառակորդի կողմից վերահսկվող շրջան*: Որպես կանոն, հիմնական հաղորդակցության ուղիների երկայնքով տարածքի մի մասն է: Այս շրջանում կենդանի ուժի և տեխնիկայի տեղափոխումը հակառակորդը ստիպված է իրականացնել ուժեղացված զինված պաշտպանության ներքո:
3. *Բնակավայր*: Քաղաքացիական դիմադրության շարժման գործողությունների տարածք: Գործողությունների մեթոդներն են՝ պասիվ դիմադրություն, հետախուզության վարում, դիվերսիաներ, հակաքարոզչություն:
4. *Հենակետ:* Հակառակորդի երկարաժամկետ պահվող տեղանքի մի հատված, որպես կանոն, գումարտակի կամ բացառիկ դեպքերում մինչև ուժեղացված

վաշտի ուժերով: Նրա պաշտպանության համար կարող են սրքավորված լինեն դիրքեր, շրջափակված մետաղալարերով և ականապատ դաշտերով, լուսարձակներով և այլն: Ուղեկցող դասակների համար, բացի այդ, կարող է կահավորված լինել նաև հանգստի վայրեր:

5. *Շարժական (մոբիլ) ուժեր*: Զինված ջոկատներ, որոնք բաղկացած են վաշտից մինչև գումարտակ: Հակառակորդը զինված ջոկատների դեմ օպերացիաներ իրականացնելու դեպքում կարող է ետ քաշվել հարևան շրջաններ: Վերադարձը շրջան տեղի կունենա, երբ հակառակորդի ստորաբաժանումները կհեռանան: Խոշոր մարտեր ջոկատը չպետք է վարի:
6. *Քաղաքացիական դիմադրության շարժման ուժեր*: Քաղաքների և խոշոր բնակավայրերի բնակչությունն է, ովքեր մնալով տեղում, պետք է ակտիվորեն գործեն, բայց անհրաժեշտության դեպքում կարող են ժամանակավորապես դադարեցնել գործողությունները: Սերտորեն համագործակցում են զինված ջոկատների հետ:
7. *Զինված ջոկատների հարձակումը* պետք է իրականացվի հակառակորդի հաղորդակցությունների վրա՝ նրա հենակետերից հեռու, բացառիկ դեպքերում՝ փոքրաթիվ կայազորների վրա:

Ազատագրված տարածքները չունեն որոշակի սահմաններ: Նրանք կարող են ունենալ մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր տարածք:

Ազատագրված տարածքները, որպես կանոն, կարող են գոյություն ունենալ միայն մի քանի շաբաթ կամ ամիս, մինչև հակառակորդը կսկսի խմբերի ոչնչացման գործողությունները, ինչը զինված ջոկատներին կստիպի նահանջել և թողնել ազատագրված տարածքները:

Դիմադրության շարժման տեղական ուժերի փոքր ակցիաներով («քորոցային խոցման մարտավարություն») ձեռք է բերվում թշնամու ուժերի փոշիացում, ինչը պահպանում է նախաձեռնությունը և մեծ օգնություն է ցուցաբերում շարժական զինված ջոկատներին:

6. Զինված ջոկատների և ստորաբաժանումների կազմավորումը

Հիմնական դժվարությունը զինված ջոկատների անձնակազմի օպտիմալ թիվը որոշելն է :

Փոքրաթիվ ջոկատներ:

Փոքրաթիվ ջոկատների (ջոկից մինչև դասակ) առկայության պայմաններում հակառակորդը զբաղեցրած տարածքում իրավիճակը վերահսկելու համար կարող օգտագործել փոքր ուժեր և ունենալ բավարար պահուստ :

Այս դեպքում տարածքը վերահսկելու համար հակառակորդին բավական է դիտակետերի լայն ցանցի ծավալումը: Գործակալներն ու դավաճանները կարող են ակտիվ աջակցություն ցուցաբերել հակառակորդին:

Հակառակորդի դիտակետերի լայն ցանցը կարող է զգալիորեն կաշկանդել զինված ջոկատների գործողությունները (գծանկար 4):

Խոշոր ջոկատներ:

Ծանր սպառազինությամբ խոշոր ջոկատները հակառակորդին կստիպեն կարևոր բնակավայրերում ունենալ ուժեղ կայազորներ:

Կայազորների միջև, որպես կանոն, չեն սարքավորվի դիտակետեր, քանի որ դրանք կարող են հեշտությամբ ոչնչացվել զինված ջոկատների կողմից: Այդպիսի իրավիճակը

մեծապես կխոչընդոտի գործակալների և դավաճանների գործունեությանը, որոնք հեշտությամբ կարող են մեկուսացվել:

Գրավված տարածքներում հսկողություն և վերահսկողություն կազմակերպելու հակառակորդի կարողությունների նվազեցումը կապահովի բարենպաստ պայմաններ զինված ջոկատների գործողությունների համար:



Գծանկար 4. Հակառակորդի դիտակետերի ցանց

Խորհուրդ է տրվում կազմավորել ջոկատներ միչև գունդ կառուցվածքով: Գունդ, առավել ևս, գնդից բարձր ջոկատներ կազմավորելն առաջացնում են բարդություններ: Նրանք շատ ծանրաշարժ են և կարող են արագ ոչնչացվել հակառակորդի կողմից: Բացի այդ, դժվար է կառավարել դրանք և կազմակերպել դրանց մատակարարումը:

Առավել հարմար է ստեղծել մինչև գումարտակ ստորաբաժանումներ, տարատեսակ ԱԹՍ-ներով, նռնականետերով, ականանետներով, առանց հետգլորք և այլ զինատեսակներով հագեցած: Նրանք կարող են հաջողությամբ գործել հակառակորդի ստորաբաժանումների դեմ: Մյուս կողմից, մտավախություն կա, որ մարտական գործողությունների ժամանակ այդպիսի ջոկատները կփորձեն գործել այնպես, ինչպես կանոնավոր զորքերը՝ ամբողջովին անտեսելով պատերազմի վարման սկզբունքները:

Աշնանը և ձմռանը ջոկատների թիվը կարող է կրճատվել, իսկ ամռանը, ընդհակառակը՝ ավելանալ:

Այսպիսով, եթե պատերազմի ընթացքում հնարավոր լինի ստեղծել մինչև գումարտակ սպառազինված ջոկատներ, հակառակորդը չի կարողանա ամբողջությամբ գրավել երկիրը, այլ կսահմանափակվի միայն տարածքի ամենակարևոր շրջանների և հատվածների, հատկապես հաղորդակցության ուղիների գրավմամբ և պահպանմամբ:

7. Զինված ջոկատներին հետախուզական տվյալներով ապահովելը

Դիմադրության շարժումը ջոկատներին պետք է ապահովի գործակալներից և դիտարկման միջոցով ստացված հետախուզական տվյալներով (գծանկար 5):



Գծանկար 5. Ջոկատների հետ կապի կազմակերպում

Գործակալները հետախուզական տեղեկությունները ձեռք են բերում խոսակցությունների, զրույցների և հեռախոսային հաղորդագրությունների գաղտնալսման, օկուպացիոն իշխանությունների ներկայացուցիչների հետ նպատակային զրույցների միջոցով:

Հակառակորդի զորքերի տեղաշարժը ժամանակին բացահայտելու նպատակով դիտարկումը կազմակերպվում է մայրուղիներում, երկաթուղային գծերում և օդանավակայաններում :

Հետախուզական տեղեկատվությունների փոխանցումը կարող է իրականացվել կապի, ռադիոյի և, ինչու չէ, փոստային աղավնիների միջոցով:

8.Զինված ջոկատների նախապատրաստումը պատերազմին

Զինված ջոկատների նախապատրաստման կազմակերպչական աշխատանքները ներառում են.

- անձնակազմի ուսուցումը (վերապատրաստումը),
- զենքի, զինամթերքի, սննդամթերքի և հանդերձանքի (համազգեստ, ուսապարկեր, վրաններ) գնումը (ձեռքբերումը),
- բնակչության հետ փոխգործակցության կազմակերպումը:

Զինված ջոկատների կազմավորումը (գծանկար 6)

Կախված անձնակազմի քանակից կարող են ստեղծվել ջոկատներ կամ ստորաբաժանումներ: Զինված ջոկատների անձնակազմի թիվը չպետք է գերազանցի 300-400-ը, իսկ ստորաբաժանումներինը՝ 70-100-ը: Ջոկատը կարող է ներառել շտաբ, երկու կամ երեք թեթև և մեկ ծանր ստորաբաժանումներ:

Ջոկատի շտաբը (10-20 մարդ) կարող է բաղկացած լինել ղեկավարման (կառավարման) խմբից, հետախուզական, կապի և այլ մասնագետներից բաղկացած ստորաբաժանումներից:

Ղեկավարման (կառավարման) խումբը պետք է բաղկացած լինի հրամանատարից, տեղակալից (օգնականից) և կապի սպայից:

Հետախուզական բաժանմունքը՝ 2-3 հոգուց (հիմնականում կադրային անձնակազմ): Նրանք կազմակերպում են հետախուզական գործունեությունը և ղեկավարում տեղական բնակչության գործակալներին:

Կապի բաժանմունքը (4-6 հոգի) պատասխանատու է դիմադրության շարժման ղեկավարության, հարևան ջոկատների և ստորաբաժանումների, բանակի ղեկավարության հետ կապի կազմակերպման համար:

Մասնագետների բաժանմունքը (6 հոգի) պետք է բաղկացած լինի երկաթուղային տրանսպորտի, էլեկտրասարքավորումների, կապի միջոցների մասնագետներից, ինժեներսկրավոր սպայից, գործակալ-կապավորից (քաղաքական գործիչ, քահանա և այլն), քարոզչության մասնագետից: Երկաթուղային տրանսպորտի, էլեկտրական սարքավորումների, կապի միջոցների մասնագետները և ինժեներ-սկրավոր սպան (պատասխանատու) կազմակերպում ու ղեկավարում են հատուկ դիվերսիաները: Գործակալ քահանան պահպանում է ջոկատի կապը բնակչության հետ: Քարոզչության մասնագետը, հակաքարոզչության հարցերի շուրջ, կազմակերպում է զինված ջոկատի փոխգործակցությունը դիմադրության շարժման հետ:

Ստորաբաժանումներն ըստ հագեցվածության աստիճանի կարող է լինել թեթև և ծանր:

Թեթև ստորաբաժանումը (70-80 մարդ) կարող է բաղկացած լինել կառավարման խմբից, սանիտարական ջոկից, մեկ կամ երկու մարտական ու պայթեցնող դասակներից:

Վարչակազմը բաղկացած է հրամանատարից, նրա տեղակալից և մթերապահից (վաշտի ավագ): Սանիտարական ջոկը բաղկացած է 2-3 հոգուց՝ սպառազինված պատգարակներով և բժշկական գույքով: Մարտական դասակը (20-25 մարդ) սպառազինված է հրաձգային զենքերով և ձեռքի նռնակներով: Պայթեցնող դասակը (15-20 մարդ) բացի հրաձգային զենքերից սպառազինված է նաև պայթուցիկ նյութերով և հրկիզող միջոցներով:

Ծանր ստորաբաժանումը (80-100 մարդ) կարող է բաղկացած լինել կառավարման խմբից, սանիտարական, հակատանկային, մեկ-երկու գնդացրային, մեկ-երկու ականանետային, թեթև «Багги» մակնիշի ավտոմեքենաների և ԱԹՍ-ների դասկներից: Այսպիսի ստորաբաժանումը պատասխանատու է անձնակազմի պատրաստման և մատակարարման կազմակերպման համար: Ծանր ստորաբաժանման դասակները լրիվ կազմով կամ ջոկերով, որպես ուժեղացում, կարող են տրվել թեթև ստորաբաժանումներին :

Ամբողջ կազմով ծանր ստորաբաժանումներն օգտագործվում են միայն բացառիկ դեպքերում:

Կառավարման խմբում ներառվում են հրամանատարը, նրա տեղակալը, մթերապահը (վաշտի ավագ): Սանիտարական ջոկը բաղկացած է երկու-երեք հոգուց, որոնցից մեկը բժիշկ է, սպառազինված՝ պատգարակներով և բժշկական գույքով: Հակատանկային

դասակը (15-20 մարդ) սպառազինության մեջ ունի նռնականետեր, առանց հետգլորքի հրանոթներ, ՀՏԿՀ-ներ, ՀԱՀ-ներ, իսկ որոշ դեպքերում՝ հակատանկային թնդանոթներ: Գնդացրորդների դասակը (20-30 մարդ) կարող է սպառազինված լինել չորսից վեց գնդացիրներով, իսկ ականանետային դասակը (10-15 մարդ)՝ երկու-երեք տարբեր տրամաչափի ականանետերով: «Багги» ավտոմեքենաների դասակում (10-12 մարդ) կարող է լինել 3-4 մեքենա, որոնք նախատեսված են գնդացիրների, ականանետների, առանց հետգլորք հրանոթների, վիրավորների, սննդի, զինամթերքի տեղափոխման համար: ԱԹՍ-ների դասակը (15-20 մարդ) սպառազինված է հետախուզական, հարվածող և անհրաժեշտ այլ թռչող սարքերի տեսականիով:

Գծանկար 6. Զինված ջոկատի կազմավորումն ու խնդիրները



Անձնակազմի բաշխում

Անձնակազմն ստորաբաժանումներում բաշխվում է ըստ իր ստացած պատրաստվածության:

Անձնակազմի անհամալրվածությունը և կորուստները լրացվում են քաղաքացիական բնակչության հաշվին:

Շարքային մոտոհրաձգայինները, որպես կանոն, ուղարկվում են մարտական թեթև ստորաբաժանումների դասակներ: Սակրավորները և մասնագետ-պայթեցնողներն ուղարկվում են պայթեցնողների դասակներ: Գնդացրորդները, ականանետորդները, նռնականետորդները, ՀՏԿՀ-ների, ՀԱՀ-ների նշանառուները և հակատանկային թնդանոթների հաշվարկները ուղարկվում են ծանր ստորաբաժանումներ: Բժշկական ծառայության մասնագետներով (տղամարդիկ և կանայք) համալրվում են ստորաբաժանումների սանիտարական ջոկերը:

Զինվորականները և քաղաքացիական քահանաները պետք է ուղարկվեն շտաբներ (մասնագետական բաժանմունքներ) կամ սանիտարական ջոկեր: Նրանք կարող են հաջողությամբ օգտագործվել որպես կապակցողներ, ինչպես նաև ներգրավվել բնակչության կողմից պատսպարած վիրավորների և հիվանդների հետ աշխատելու համար:

Վերապատրաստվելու և հետագայում թեթև ստորաբաժանումներում ընդգրկվելու համար կարող են ներգրավվել.

- վարորդները, տանկիստները, հրետանավորները,
- օդաչուները, ցամաքային ավիացիոն ծառայության անձնակազմը, զենիթա-վարները,
- մատակարարման և դաշտային փոստի զորամասերի զինծառայողները,
- ոստիկանները, տեղական ինքնապաշտպանության անձնակազմը, ձեռնարկությունների և օժանդակ ծառայությունների պահակային ծառայության անդամները,
- կամավորները, զորակոչիկները, կուրսանտները,
- առողջականով կամ ըստ տարիքի զինվորական ծառայությունից արձակվածները,
- պատերազմի ժամանակ ծառայությունից ազատվածները,
- փոստային ծառայողները, ռազմական ձեռնարկությունների աշխատակիցները և այլոք:

Պրոֆեսիոնալ ռադիոօպերատորների փոխարեն նպատակահարմար է օգտագործել ռադիոսիրողներին:

Զինագործ մասնագետները, ինչպես նաև որոշ դեպքերում քաղաքացիական մեխանիկները պետք է զբաղվեն ռազմավարային զենքի ուսումնասիրությամբ, քանի որ նրանք ի վիճակի են արագ տիրապետել և սովորեցնել ուրիշներին տիրապետել այդ զենքերին:

Անձնակազմի ուսուցում

Անձնակազմի վերապատրաստման ընթացքում անհրաժեշտ է գործել շրջահայաց: Պետք չէ հակառակորդին հրահրել պատասխան գործողություններ ձեռնարկելուն :

Դասընթացներին պետք է ներառվեն ողջ անձնակազմը, ներառյալ փորձառու մարտիկները, քանի որ նախապատրաստման ընթացքում հրամանատարական կազմը հնարավորություն է ունենում լավ ուսումնասիրել իրենց ենթականերին, իսկ մարտիկները՝ ավելի մոտիկից ճանաչել հրամանատարներին:

Ուսուցման գործընթացում ուսումնասիրվում են զինված պայքարի մարտավարությունը, զենքի, պայթուցիկ նյութերի և հրկիզման միջոցների, ռազմավարային զենքի օգտագործման հնարքներն ու ձևերը:

Կախված իրավիճակից՝ ուսուցման տևողությունը կարող է լինել մի քանի օրից (շաբաթներից) մինչև երկու ամիս:

Կազմակերպչական հարցերի որակական լուծմամբ և անձնակազմի բավարար պատրաստվածությամբ կարելի է հասնել ավելի քիչ կորուստների և սեփական ուժերի նկատմամբ ավելի մեծ վստահության ձեռքբերմանը:

Բնակչության մասին տեղեկությունների հավաքում

Բնակչության մասին տեղեկություններ հավաքելիս անհրաժեշտ է որոշել.

- ում կարելի է վստահել,
- ով է պատրաստ ակտիվորեն օգնել (սնունդ մատակարարել, հետախուզական տեղեկություններ հավաքել, վիրավորներին և հիվանդներին բուժել, ականապատել թշնամու օբյեկտները),
- ով է համակրում հակառակորդին կամ համագործակցում նրա հետ:

Հրամանատարական կազմի ձևավորում

Ջոկատներում հրամանատարների ընտրությունը կարող է իրականացվել ոչ այնքան մանրակրկիտ, որքան կանոնավոր բանակում: Անձնակազմի կողմից հրամանատարի ընդհանուր հարգանքն ու ճանաչումը բավարար պայման է նրա նշանակման համար: *Ջոկատում զինվորական կոչումը երկրորդական արժեք է*:

Հրամանատարը պետք է ունենա որոշակի տեխնիկական գիտելիքներ, քանի որ զինված պայքարի ընթացքում նա ստիպված է դիվերսիաներ կազմակերպել և իրականացնել տարբեր օբյեկտներում:

Զինված ջոկատի յուրաքանչյուր հրամանատար ունի զգալիորեն ավելի մեծ անկախություն և գործողությունների ազատություն, քան կանոնավոր բանակի նմանատիպ աստիճանի հրամանատարը: Զինված պայքարում շատ հրամանատարներ պետք է կարողանան լիովին ինքնուրույն գործել:

Գաղտնիության ռեժիմի պահպանում

Հակառակորդի թիկունքում գործող զինված ջոկատների շտաբը պետք է գտնվի ընդհատակում: Նրա նստավայրի տեղակայման մասին չպետք է իմանան ինչպես մարտիկները, այնպես էլ ջոկատների այլ անդամներ:

Ջոկատների ամբողջ ղեկավարումը և նրանց հետ կապը պետք է իրականացվի կապավորների (սուրհանդակների) և տեղեկատվության (կապի) կետերի միջոցով: Տեղեկատվության (կապի) վայրերը և հաղորդումների հասցեները պետք է իմանան ջոկատների հրամանատարները և 2-3 կապավոր մարտիկներ:

Գաղտնագործունեության նպատակով այն անձանց բնակարաններում, որտեղ պետք է տեղի ունենան հանդիպումներ կապավորների հետ, չպետք է իմանան շտաբի գտնվելու վայրը: Գաղտնաբառը և հետադարձ կապը հաղորդվում են միայն խիստ սահմանափակ թվով անձանց:

Տեղեկատվության (կապի) կետերը կարող են լինել վստահելի անձանց բնակարանները:

Տեղեկատվության (կապի) փոխանակման կետը ներկայացնում է «փոստարկղ», որն ընտրվում է ծածկված վայրում (ծառի խոռոչում, քարի տակ և այլն), որը նշագրվում է հատուկ նշաններով, որոնք էլ թույլ են տալիս հեշտությամբ և ազատորեն գտնել այն մութ ժամանակ: Ջոկատի համար այդպիսի փոխանակման կետեր պետք է լինեն 2-3-ը, որոնցից մեկը հիմնական, իսկ մնացածը՝ պահեստային: «Փոստարկղում» ջոկատների

հրամանատարներն առնվազն 2-3 օրը մեկ դնում են իրենց զեկույցները և ստանում հրամաններ ու ծանուցումներ:

Ամբողջ նամակագրությունը պետք է իրականացվի ծածկագրմամբ, թեկուզ պարզ: Յուրաքանչյուր բնակավայր (թաղամաս) պետք է ունենա իր ծածկագիրը:

Կանոնավոր զորքերի հետ հաղորդակցվելու համար ջոկատների շտաբները պետք է ունենան ժամանակակից ռադիոընդունիչներ, որոնք պետք է կազմաձևված լինեն նախապես պայմանավորված ալիքին:

Անձնակազմի հանդերձավորում

Որպես կանոն, ջոկատների անձնակազմի հիմնական մասը կազմում են տեղացիները, որոնց պետք է հագցնել և զինել:

Անձնակազմին տեղավորելու համար անհրաժեշտ է ունենալ վրաններ: Դրանք կարող են ձեռ բերվել բնակչության շրջանում և մասնագիտացված խանութներներից:

Ուսապարկերը, դանակները, սպասքը, արշավային տափաշշերը, գրպանի լապտերները ձեռք են բերվում մասնագիտացված խանութներներից, բնակչության հանգանակած միջոցներով,կամ հակառակորդի զոհված զինվորներից:

Ձմռանը նախապատրաստվելը պետք է իրականացվի նախօրոք: Անհրաժեշտ է հավաքել բրդյա վերմակներ, քնապարկեր, վերարկուներ, բաճկոններ, տաք ներքնազգեստներ, լավ կոշիկներ, քողարկման խալաթներ և այլն:

Յուրաքանչյուր ստորաբաժանման համար ցանկալի է ունենալ երկու ռադիոընդունիչ՝ ինքնավար և էլեկտրական ցանցից սնուցմամբ:

Սպառազինում

Ջոկատներին զենքով ապահովելու խնդիրն ավելի քիչ բարդ է, քան զինամթերքով մատակարարելը :

Խմբային զենքերը (ձեռքի գնդացիրներ, ռեակտիվ հակատանկային նռնականետեր, ականանետեր, առանց հետգլորք թնդանոթներ և այլն) պետք է լինեն կանոնավոր բանակային ստորաբաժանումների սպառազինությունում, որոնք կկազմեն ջոկատների առանցքը:

Տեղական պաշտպանության կազմավորումների մարտիկները և ոստիկանները պետք է ժամանեն, որպես կանոն, իրենց կցագրված զենքով (ատրճանակներով, ավտոմատներով):

Կամավորները պետք է զինվեն զինված կազմավորումների ուժերով :

Զենքի հայթայթում

Մեծ թվով քաղաքացիներ՝ համաձայն «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի ունեն հին, բայց դեռ օգտագործման համար պիտանի հրաձգային զենք[2]:

Զենքը կարող է առգրավվել նաև տարբեր արհեստանոցներից և մասնագիտացված խանութներից:

Զենքեր կարող են հայթհայթվել նաև մարտադաշտերից, ավերված պաշտպանական կառույցներից, շարքից հանված տանկերից, հետևակի մարտական մեքենաներից[3] ինքնաթիռներից և ուղղաթիռներից[4]:

Զինամթերքի և պայթուցիկ նյութերի մատակարարումը

---

[2] Օկուպացիոն իշխանությունը բնակչությունից կպահանջի կամավոր հանձնել հրազենը: Այն ապօրինի պահելու համար կսահմանվի խիստ պատիժ:

[3] Ապամոնտաժվում են գնդացիրները, առգրավվում են ձեռքի նռնակները, ատրճանակներն ու ինքնաձիգները, ինչպես նաև պիտանի այլ զինամթերքը:

[4] Ապամոնտաժվում են ավիացիոն ռումբերն ու հրթիռները՝ հետագայում որպես տարբեր լիցքեր օգտագործելու համար:

Զինամթերքի պակասը մեծապես կազդի զինված ստորաբաժանումների մարտավարության վրա: Զինամթերքի մատակարարումը կարող է իրականացվել կանոնավոր բանակի ստորաբաժանումների և զորամասերի, լքված և չոչնչացված պահեստների, հակառակորդի տրանսպորտային միջոցների և զինամթերքի պահեստների գրավման հաշվին:

Բացի այդ, զինամթերքը կարող է տեղափոխվել դաշնակից բարեկամ երկրներից: Զինամթերքը կարող է հավաքվել նաև բնակչությունից, փոքր զենքի վաճառքի մասնագիտացված խանութներից, արհեստանոցներից, ինչպես նաև կարելի առգրավվել ոստիկաններից և շինարարական ընկերություններից (պայթուցիկ նյութեր):

Վերանորոգման կազմակերպում

Սարքավորումների և զենքի ժամանակին վերանորոգումը զինված կազմավորումների համար կարևոր դեր է խաղում :

Ջոկատների գույքը վերանորոգելու համար կարող են ներգրավվել կանոնավոր բանակի և ժամանած քաղաքացիական մասնագետները (սպառազինության մասնագետներ, մեխանիկներ և այլոք):

Փոքր ծավալի վերանորոգումը կարող է իրականացվել դաշտային պայմաններում: Առավել խոշոր վերանորոգումները պետք է կատարվեն գաղտնի՝ քաղաքացիական մեխանիկական արհեստանոցներում, որտեղ քաղաքացիական մասնագետները օգտագործելով վերանորոգման սարքավորումները, օրվա ընթացքում մի քանի ժամ կարող են աշխատել, քողարկելով իրենց գործունեությունը,:

Սանիտարական ծառայություն

Ջոկատներում, որպես կանոն, բժշկական ստորաբաժանումներ չեն ստեղծվում, դաշտային հիվանդանոցներ չեն բացազատվում, քանի որ ստորաբաժանումները անընդհատ շարժման մեջ են: Ստորաբաժանումներում ստեղծվում են սանիտարական ջոկեր: Բժշկական ծառայության մասնագետները հավասարաչափ բաշխվում են բոլոր ջոկերում:

Բժիշկները, որպես կանոն, ուղարկվում են ծանր ստորաբաժանումների սանիտարական ջոկեր:

Բուժքույրերի, սանիտարների անհամալրվածությունը լրացվում է քաղաքացիական բնակչության հաշվին:

Սանիտարական ջոկերը միայն առաջին օգնություն են ցուցաբերում վիրավորներին և պատրաստում են տեղափոխման: Հետագա բուժումը վիրավորները ստանում են քաղաքացիական հիվանդանոցներում:

Ջոկատները բժշկական գույքով ապահովվում են կանոնավոր բանակի ստորաբաժանումներից և զորամասերից մնացած պաշարների, բնակչության հանգանակած միջոցների, տարբեր բժշկական հաստատություններից (հիվանդանոցներ, դեղատներ) և մասնավոր բժիշկներից առգրավված գույքի ու միջոցների հաշվին:

Սննդի մատակարարում

Պատերազմի ընթացքում կանոնավոր բանակի սնունդը մատակարարվում է բազաներից և պահեստներից: Ջոկատների սննդով ապահովումն իրականացվում է ինքնուրույն՝ տեղի բնակչության հաշվին կամ հակառակորդից սննդամթերքի առգրավմամբ: Հետևաբար, ջոկատները, որպես կանոն, պետք է տեղակայվեն միմյանցից առանձին և միավորվեն միայն խոշոր գործողություններ իրականացնելու ժամանակ:

70-100 հոգանոց ջոկատին ավելի հեշտ է սննդով ապահովել, քան 400 հոգանոց ջոկատին:

Սննդամթերք կարող են ձեռք բերվել գյուղացիներից, խանութներից և պահեստներից: Ընդ որում, պետք է խուսափել տեղի բնակչության հետ կոնֆլիկտներից: Անհրաժեշտ է վճարել բոլոր ապրանքների համար: Ցանկալի է առգրավվել օկուպացիոն իշխանության համար աշխատող սննդի խանութների և պահեստների (բազաների) ապրանքը:

Որսը և ձկնորսությունը միայն մասամբ կարող են փոխհատուցել սննդամթերքի պակասը:

Բարձրորակ և երկար պահվող մթերքներից (պահածոյացված կաթ, շոկոլադ, ձվի փոշի, չորահաց, պահածոներ, ապխտած միս, խոզի ճարպ, երշիկեղեն) անհրաժեշտ է ձմռան համար պաշարներ ստեղծել և դրանք պահել քողարկված պահեստներում (բազաներում):

Ջոկատներին օգնելու համար բնակչության օգտագործում

Բնակչությունը ջոկատների լավագույն ընկերն ու օգնականն է: Առանց նրա օգնության զինված կազմավորումները չեն կարողանա երկարատև պայքար մղել: Պետք է ամեն կերպ խուսափել բնակչության նկատմամբ անկարգապահ վարքից: Ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, իսկ այդպիսի վտանգն անընդհատ առկա է, որպեսզի ջոկատները բնակչությանը չարիք պատճառեն:

Առգրավման ժամանակ չպետք է դիմել զենքի կիրառմանը:

Օկուպացիայի ժամանակ բնակչությունը սկզբում երկչոտ և վախեցած կլինի, սակայն հետագայում նրանք կակտիվանան և կներգրավվեն հակառակորդի դեմ պայքարին և մեծ օգնություն ու աջակցություն կցուցաբերեն ջոկատներին, հատկապես՝ հակառակորդի դիտարկումների հարցում, ջոկատների դեմ նախապատրաստվող ակցիաների մասին տեղեկությունների հավաքագրման, սննդի ապահովման, հիվանդ և վիրավոր մարտիկների բուժման, զենք-զինամթերքի և այլ միջոցների մատակարարման, ջոկատներն անձնակազմով համալրման, հակառակորդի հետ համագործակցող տեղացիների բացահայտման գործում:

Ջոկատների գործողությունների տարածքներում հրամանատարները պետք է գաղտնի և չափազանց զգույշ համագործակցեն դիմադրության շարժման ներկայացուցիչների հետ: Երբեք չպետք է մոռանալ, որ ջոկատների հեռանալուց հետո դիմադրության շարժման անդամները մնալու են օկուպացված տարածքում և շարունակելու են իրենց աշխատանքը:

9. Ջոկատների ամենօրյա գործունեությունը

Մարտընչելիս տեղանքը բաժանվում է մարտական գործողությունների շրջանի և հանգստի գոտու: Հանգստյան գոտում հակառակորդի դեմ հարձակում և դիվերսիա, որպես կանոն, չի իրականացվում :

Մարտական գործողությունների շրջանի և հանգստի գոտու միջև հեռավորությունը կտրտված տեղանքում պետք է լինի առնվազն 10 կմ, հարթավայրաինում՝ 15 կմ:

Հանգստի կազմակերպումը մարտական գործողությունների շրջանում

Տեղաշարժը պետք է իրականացվի միայն մութ ժամանակ: Հանգստի համար կանգառի լավագույն պայմանն անտառն է: Բաց տարածքում հանգստանալու համար կանգ առնելիս անհրաժեշտ է զբաղեցնել բարձրադիր վայրեր՝ դիտարկում կազմակերպելու նպատակով: Չի կարելի երկու անգամ գիշերել նույն տեղում, ինչպես նաև ցերեկային հանգստի տարածքում (գծանկար 7):

Օրվա ընթացքում կանգ առնելիս անհրաժեշտ է կազմակերպել դիտարկում, իսկ գիշերը տեղադրել կրկնակի պահակակետեր (գծանկար 8): Հեռու դրված պահակակետերն անարդյունավետ են :

Հակառակորդի օդային հետախուզումից պաշտպանվելու համար կարևոր է անընդհատ քողարկվել: Առավել վտանգավոր են ԱԹՍ-ներն ու ուղղաթիռները, որոնք կարող են անակնկալի բերել ջոկատներին:

Հակառակորդի հարձակման դեպքում, մարտիկների գործողությունները ներդաշնակեցնելու նպատակով անհրաժեշտ է յուրաքանչյուր օրվա համար սահմանել տագնապ ազդարարելուց հետո գործողությունների կարգը: Միաժամանակ որոշվում են ստորաբաժանումների ու անձնակազմի ժամանման հավաքակայանների տեղերը:

Գծանկար 7. **Մարտական գործողությունների շրջանը և հանգստի գոտին**



Գծանկար 8. Պահպանության կազմակերպումը



Ճամբարի նշահարում

Ճամբարի գտնվելու վայրը պետք է ունենա լավ քողարկում օդային հետախուզումից: Ճամբարի տեղը պետք է պաշտպանված լինի քամիներից և ընտրված լինի չոր տեղանքում: Մարգագետիններում կավային շերտի առկայության պայմաններում, իսկ սաղարթախիտ անտառներում արևի ճառագայթների քիչ թափանցիկության պատճառով առաջացած ջրակայունությունը հողը պահում է խոնավ վիճակում: Հետևաբար, ճամբարի նշահարման համար առավել բարենպաստ է ավազոտ հողը, ուստի լավ է այն տեղակայել ոչ բարձր լանջապատ տեղանքում և խուսափել հարթավայրից:

Վրանների նշահարման վայրը և քողարկման կարգը որոշում է հրամանատարը: Քողարկման նպատակով վրանները ամբողջ տարածքում պետք է տարակենտրոնացվեն: Քողարկման համար նպատակահարմար է օգտագործել պաշտպանիչ անձրևանոցվրաններ, ճյուղեր և իմպրովիզացված այլ միջոցներ:

Հրամանատարը որոշում է նաև կրակն օգտագործելու կարգը, համաձայն որի խարույկի կողքին պետք է մշտապես լինի ավազկույտ, հող կամ այլ միջոց՝ արագ մարելու համար: Խարույկը մարելու համար խորհուրդ չի տրվում օգտագործել ջուր, քանի որ արդյունքում առաջացող գոլորշին կնպաստի հակառակորդի կողմից ջոկատի գտնվելու վայրը հայտնաբերելուն:

Ճամբարի տարածքը մաքրվում է ծառերից և քարերից: Դրանից հետո տեղադրվում են վրանները, որոնք անմիջապես քողարկվում են:

Ճամբարում կարգուկանոնի խիստ պահպանումն է միայն ապահովում վրանների արագ հավաքումն ու երթի կազմակերպումը, այդ թվում՝ գիշերը և եղանակային բարդ պայմաններում (անձրև, ձյուն):

Անհրաժեշտ է խմելու ջուրը վերցնել հոսող աղբյուրներից: Գետերից և լճերից ջուրը օգտագործել միայն ծայրահեղ դեպքերում և անպայման եռացնել:

Աղտոտված ջուրը պետք է զտվի ձեռքի տակ ունեցած միջոցներով (գծապատկեր 9):



Գծանկար 9. Խմելու ջրի աղբյուրի սարքավորումը

Ջոկատի համար սարքավորված արտաքնոցը և աղբահորը պետք է հեռու լինի ճամբարից (առնվազը 40-50 մ) :

Արտակարգ իրավիճակներում սննդի կազմակերպումը

Արտակարգ իրավիճակներում սնունդ ընդունելու համար կարող եք օգտագործել մրգեր, բանջարեղեն, կարտոֆիլ, հատապտուղներ, սունկ, խոտաբույսեր, թռչնամիս, ձուկ, գորտեր, խխունջներ:

Ապուրներ պատրաստելու համար կարող եք օգտագործել եգիպտացորենի, վարսակի, տարեկանի կամ ցորենի կանաչ կամ հասուն հատիկները: Կարտոֆիլը կարելի է թխել խարույկի մեջ կամ եփել :

Հաց թխելու համար կարող եք օգտագործել եգիպտացորեն, վարսակ, տարեկանի կամ ցորենի հատիկները, իսկ սուրճի համար՝ գարու հատիկները կամ կաղնու միջուկները, նախապես տապակելով դրանք մինչև մուգ շագանակագույն դառնալը, որից հետո սրճաղացով աղալ և եփել: Թեյ պատրաստելու համար կարող եք օգտագործել լորենու ծաղիկը, գիհու և շամբուկի պտուղները:

Որպես մսի, ձկների և ապուրների համար համեմունքներ կարող եք օգտագործել թրթնջուկի, երիտասարդ խատուտիկի, գիհու պտուղները, եղևնիների երիտասարդ շիվերը: Բանջարեղենի և ապուրների մեջ կարելի է ավելացնել անտառային և մարգագետնային խոտաբույսեր: Այդ նպատակով օգտագործվում են եղինջը, թրթնջուկը, խատուտիկի տերևները, եզանլեզուն, հազարաթերթիկը և այլն:

Ոլոռը, ոսպը և լոբին օգտագործելուց առաջ խորհուրդ է տրվում նախապես թրջել:

Բացի այդ, սննդի համար կարող եք օգտագործել ծառի կեղևը, եղեգը (ղամիշ), փշատերև ծառերի սերմերը, երիտասարդ եգիպտացորենի կողբը, տարբեր ընկույզներ, չհասունացած մրգեր:

Միսը խորհուրդ է տրվում եփել: Ձուկը կարելի է եփել (առնվազն 15 րոպե) կամ տապակել: Հավը և այլ թռչունները կարող են եփվել, տապակվել և խորովվել: Գորտերի ոտքերը կարելի է խորովվել, իսկ խխունջները՝ եփել երկու ժամ:

Փոքր ընտանի կենդանիները (կատուներ, շներ, ճագար, նապաստակ) եփել ամբողջությամբ կամ մաս-մաս:

Զինամթերքի պահպանումը

Չնայած դժվար պայմաններին, ջոկատում զինամթերքի պահպանումը, ինչպես նաև դրանց սպասարկումը պետք է կազմակերպվեն բոլոր կանոններով:

Զինամթերքը պետք է պաշտպանված լինի խոնավությունից, անձրևից, ձյունից, արևի ճառագայթների անմիջական ազդեցությունից, շոգից և աղտոտումից: Ցանկալի է դրանք պահել գործարանային փաթեթավորման մեջ:

Զինամթերքի պահեստավորումը

Զինամթերքը պետք է դրվի չոր տեղում տախտակների, փայտե վանդակաճաղերի վրա և ծածկվի բրեզենտով կամ թիկնոցավրանով:

Զինամթերքը չպետք է տեղադրվի ջեռուցվող սարքերի և բաց կրակի մոտ:

Պետք է ապահովվի օդի լավ շրջանառություն: Փաթեթները պետք է դրված լինեն միմյանցից 2-3 սմ հեռավորության վրա:

Չփաթեթավորված զինամթերքի վերահսկումն ու սպասարկումը

Խոնավացած զինամթերքը պետք է չորացնել ստվերոտ, բաց տարածքում, այլ ոչ թե արևի ճառագայթների տակ:

Կեղտոտված փամփուշտներից և նռնակներից կեղտը հեռացվում է լաթերի միջոցով: Պարկուճների եև արկերի յուղոզակը չի հանվում: Բենզինը, կերոսինը և այլ լուծիչները զինամթերքի մաքրման համար չեն օգտագործվում:

Խիստ ցրտերի ժամանակ թույլ մի տվեք, որ սառույց ձևավորվի փամփուշտների, նռնակների և այլ զինամթերքի վրա: Սառցակալման դեպքում ժամանակին հեռացրեք սառույցը, իսկ զինամթերքը չորացրեք:

Փաթեթավորված զինամթերքի վերահսկումն ու սպասարկումը

Զինամթերքի վրա բորբոս առաջանալիս դրանք պետք է չորացնել, սրբել և տեղափոխել այլ տեղ:

Սառույց առաջանալու դեպքում զինամթերքից հեռացրեք սառույցը, ստուգեք փաթեթավորման պահպանվածությունը: Անհրաժեշտության դեպքում չորացրեք և տեղափոխեք զինամթերքը անվտանգ տեղ:

Մեխանիկական վնասվածքներով զինամթերք չօգտագործեք:

Զինամթերքի որոշ տեսակներ շատ զգայուն են հարվածների նկատմամբ: Դա վերաբերում է պայթուցիչներին, արկերին (որոնց մեջ տեղադրված են պայթեցուցիչներ) և կումուլյատիվ զինամթերքին: Մեկ մետր բարձրությունից պինդ հողի վրա ընկնելու կամ երկու կամ ավելի մետր բարձրությունից փափուկ հողի վրա ընկնելու դեպքում դրանք կարող են շարքից դուրս գալ՝ առանց տեսանելի վնասվածքների: Խաղաղ ժամանակ այդպիսի զինամթերքով հրաձգություն չի իրականացվում: Պատերազմի ժամանակ որոշումը կայացվում է՝ ելնելով իրավիճակից:

Զինամթերքի պահեստների կահավորումը բացօթյա պայմաններում (գծանկար 10)

Զինամթերքի պահեստների կահավորումը բացօթյա պայմաններում դժվար և որոշակի գիտելիքներ պահանջող գործ է:



Գծանկար 10. Զինամթերքի պահեստի կահավորումը:

1-ջրհոս առու; 2-ճմահողով քողարկված շերտ; 3-ջրակայուն նյութ՝ խոնավությունից պաշտպանելու համար; 4-փոսը ծածկելու գերաններ կամ տախտակներ; 5-զինամթերքի արկղեր (արկղերի (փաթեթների) միջև հեռավորությունը 2-3 սմ է); 6-տախտակներից կամ չորսվակից պատրաստված փռվածք; 7-գերաններից պատրաստված հենարաններ փռվածքի համար; 8-ավազ կամ մանր խճաքար (շերտի լայնություն առնվազն 70 սմ); 9-բնական քարից պատրաստված մի քանի շերտեր:

(Շարունակելի)